

Հարգելի պարոն Շահգալոյան

«Վան» ֆուտբոլային ակումբի հասարակական կազմակերպությունը խնդրում է Ձեզ, քսանհինգ տարով, առանց վարձավճարի, տրամադրել Չարենցավանի քաղաքային մարզադաշտը, ակումբի աշխատանքները լիարժեք կազմակերպելու համար:

Ակումբը պարտավորվում է կատարել 2019-2020թթ առաջնության ընթացքում հետևյալ ներդրումները՝

1. Հանդերձարանների պատերի ապամոնտաժում
2. Թիմերի հանդերձարանների կապիտալ նորոգում
3. Թիմերի լոգարանների և սանհանգույցների կառուցում
4. Մրցավարների համար նախատեսված հանդերձարանների և լոգարան-սանհանգույցի կառուցում
5. Հանդերձարանների տանիքի ջրամեկուսացում
6. Հանդերձարանների ջեռուցման համակարգի մոնտաժում (բարսի)
7. Պատանեկան թիմերի ավելացում, ժամանակի ընթացքում հասցնելով յոթի
8. Պատանեկան թիմերին տրամադրել սպորտային պարագաներ և գույք
9. Կոյուղիների արտաքին ցանցի կառուցում
10. Պահեստայինների նստարաններ 13 նստատեղով, ծածկով /երկու հաս/ և մեկ նստարան երեք նստատեղով, ծածկով չորրորդ մրցավարի համար
11. Ռադիոհանգույցի մոնտաժում
12. Ձեռք բերել տեխնիկական միջոցներ համացանցով ուղիղ եթեր հեռարձակելու համար



13. Ձեռք բերել տեխնիկական միջոցներ /տուֆբուք, պրինտեր, պրոյեկտոր, սկաներ/
14. Ստեղծել լվացքատուն, ֆուտբոլիստների մարզումային և խաղային համազգեստների հիգիենան պահպանելու համար
15. Կառուցել երկու հանդերձարան պատանեկան թիմերի համար
16. Միջանցքի կապիտալ վերանորոգում
17. Պատանեկան թիմերի համար կառուցել սանհանգույց և լոգարան
18. Բոլոր դռները և պատուհանները փոխարինել եվրոպատուհաններով և եվրոդռներով
19. Կազմակերպել ֆան ակումբ
20. Ստեղծել մերսման սրահ համապատասխան կահավորմամբ
21. Բացել ֆեյսբուկյան էջ և ակումբի վեբ կայք, էլեկտրոնային հասցե , ինստագրամային էջ, որտեղ կտեղադրվեն ալբոմների առաջին թիմի և պատանեկան թիմերի մասին տեղեկություններ, խաղերից և մարզումներից դրվագներ, խաղերի տեսագրություններ պաշտոնական հաղորդագրություններ, որը կնպաստի ֆան ալբոմի ստեղծմանը և կնպաստի ֆուտբոլի մասսայականությանը և զարգացմանը Զարենցավան քաղաքում և մերձակա բնակավայրերում:

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. Հեռանկարային ծրագրում նախատեսել կառուցել մեկ բնական խոտածածկով խաղադաշտ և մեկ բնական խոտածածկով մարզումային խաղադաշտ
2. Խաղադաշտի լուսավորության ապահովում
3. Տրիբունայի ծածկի մոնտաժում
4. Թիմի բարձրագույն խումբ տեղափոխվելու դեպքում կառուցել հասարակական զուգարաններ
5. Կառուցել (VIP) տրիբունա և մամուլի ասուլիսների սրահ

6. Ընգրկել բարձր որակավորում ունեցող մարզիչներ, պատանեկան ֆուտբոլի խմբերում աշխատելու համար
7. Ապահովել ներկայումս մարզադպրոցում աշխատող մարզիչների որակավորման բարձրացումը և վերապատրաստումը
8. Ակումբի կողմից նախատեսվում է օգտագործել տեղական աշխատուժը:
9. Զարգացնել ֆուտբոլը Չարենցավանում և մերձակա բնակավայրերում:

Ակումբի նախագահ



Դուկասով Սերգեյ